«ԱԶԲԻԲԻ» ՅԱԻԵԼԻԱԾ

ՏԱՐԱԶԸ ԼՈՑՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՇԱԲԱԹԸ ՄԻ ԱՆԳԱՄ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ

№ 39 Կիրակի 10 Հոկտեմբերի | Չորրորդ տարի | 1893

ԲԱՑԻԱՌ Է «ՏԱՐԱԶ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԵՌԱՄՍԵԱՑ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՅՈՒՆԻՒԱՐԻ 1-Ը ԱՐԺԷ **ՄԷԿ** ՌՈՒԲԼԻ 50 ԿՈՊ.

ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ՀՌՈՆԵՐ

VI

(Նիւթեր մեր ժողովրդական կեանքի ուսումնասիրութեան համար)։

Հռօն առհասարակ շռայլ է մինչև իսկ իր գծուծ, խղճուկ կեանքի մէջ. լուրջ, տնտեսական որոշ պայմանների վրայ հիմնուած չափաւոր ու ձեւաւոր կեանքը նա չի հասկանում, տնտեսելու, անվերջ շահ-ւելու, անյագաբար դիզելու ձգտումը նրանում չի երևում. «Աստուած ողորմած է», ասում է նա և իր մի քանի աւելորդ կոպէկները շռայլում։ Զբաւորութեան ժամանակ, ձախորդ պայմաններում նա ապրում է անտրտունջ, կրում է նիւթական ծանր զրկանքներ առանց գանգատւելու իր բախտից. իսկ առատութեան տարիները, տնտեսական աջող պայմաններում նա տնտեսել չգիտէ, որովհետև նա հեռու մտածել չգիտէ, սև օրւան մասին գաղափարը թոյլ է և աջողութիւնն ու անաջողութիւնը, աղքատութիւնն ու հարստութիւնը նա Աստծուց և միայն Աստծուց է կախած տեսնում. մարդկային բոլոր ջանքերը առանց Աստծոյ կամքի նա ոչինչ է համարում, իսկ եթէ նա կամենայ՝ չնչին ջանքն անգամ կըսպակի աջողութեամբ, հետևապէս աւելորդ է սև օրւան մասին մտածել, քանի որ նրա առաջն առնելը վեր է մարդկային կարողութիւնից և միայն Աստծոյ գործ է։

Այս դեռ քիչ է, նա կեանքի վրայ մի այլ հետաքրքիր հայեացք ևս ունի. Հռօն կեանքը հասկանում է իբրև ուրախութիւն, զարճութիւն։ Երգը, պարը, խնճոյքը, հարսանիքը, ուխտագնացութիւնը, տօներին յատուկ զարճութիւնները և այս բոլորի անքաժան-ընկերը գինին՝ նա նոյնքան անհրաժեշտ է համարում կեանքի համար, որքան և ուրիշ աւելի կարևոր կենսական պահանջները։ Ժամանակը նրա աչքում այնքան մեծ գին չունի, երբ կարելի է մի քանի զարճալի ժամեր անցկացնել։ Եւ չիրաւի որքան աղքատ լինի Հռօն, այնուամենայնիւ տօն օրերին մի կերպ պէտք է ուրախանայ—գոնէ մի քանի բաժակ գինի կըխմի, գլուխը կըտաքացնի, կ'երգի, կըճչայ և այդ կերպով կ'արտայայտի սրտի ուրախութիւնը։

Ուխտագնացութիւնը մի լաւ ապացոյց է Հռօի անհաշիւ կեանքի։ Այդ կրօնական հանդէսն այժմ մասամբ կորցրել է նախկին իր զուտ կրօնական նշանակութիւնը և համարւում է մեծ մասամբ զարճութեան տեղի, ուր հանդիպում են իրար զանազան հասակի և սեռի անձինք, հեռաւոր ազգականներ և առաջ է գալիս մի տեսակ մտքերի փոխանակութիւն, ճաշակների փոխանակութիւն, սովրում են իրարից փոխադարձաբար և այլն, և սըրբավայրերը դիմողները այժմ այլ և շատ քիչ անգամ են նպատակ ընտրում սրբերի ողորմութիւնը

հայցել։ Այսպէս թէ այնպէս, ուխտատեղիները կարծես բացառապէս Հռօների համար են սահմանուած և դրանք մեծ բազմութեամբ լցւում են այդտեղ առանց խորութեան սեռի և հասակի, մինչդեռ խոյեցիների առանց այն էլ սակաւաթիւ յաճախողները գնում են ըստ մեծի մասին այնտեղ առևտուր անելու համար և կամ աղջիկ հաւանելու ու Հռօներին դիտելու։ Եւ մինչ Հռօները բացի մի քանի մրգավաճառներից, հանդիսանում են իբրև գնողներ, շրջւում են իրանց դառն քրտնքի պտուղները, խոյեցիք այդ ժամանակ շարիշար փռւում են իրանց ապրանքը և վաճառում։

Ուխտատեղիները ի հնուց անտի համարւած են մի տեսակ ոդիմպիական խաղերի առպարէզ հայերի համար, ուր իւրաքանչիւր ոք հանդէս է բերել իր ձիրքերը, ընդունակութիւնները, Հռօները մինչև այժմ էլ պահում են ուխտատեղիների այդ նշանակութիւնը—այնտեղ նրանք այդ մասով կատարեալ իշխողներ են հանդիսանում ի մեծ զարհուրութիւն խոյեցիների։ Ուխտատեղիների ծաղիկները-զարդերը կազմում են նախ Հռօ աղջիկները, որոնք կատարեալ ազատութիւն են վայելում իրանց ստեղծագործութիւններով այստեղ փայլելու, և պար բռնած աղջիկների գլխ «լէլէն» գիշերային խաւարի մէջ, բազմաթիւ ելևէջներով տարածւում է ունկընդիրների վրայ, որոնք համախմբւում են այս համերգը լսելու։ Մի այլ կողմում Հռօ աշուղն է ահռելի ձայնով գովասանում իր հերոսներին, և ստւար բազմութեան ակնապիշ դիտողութեան առարկան դառնում, իսկ դափ ու զուռնաչի Հռօներն իրանց գործիքների անախորժ պզպզոցով մարդու ականջ են խլացնում. աւելի հեռուն լարախաղ Հռօն է սուրբ Կարապետի օգնութիւնը հայցելով՝ լարի վրայ ցատկոտում և ճարպիկ շարժումներ անում. մի խօսքով որ կողմն էլ նայէք՝ Հռօներն են ընդհանուրի ուշադրութեան առարկան։ Ինչով է մրցում դրանց հետ խոյեցին, կամ առևտրով և կամ իր կիսաբրոպական կիսաասիական տարազով. տես մի քանի գնձեմ հովանոցներ են ծածանում օդի մէջ, դրանք խոյեցի աղջիկներին են պատկանում, որոնք իբր թէ քնքոյշ քայլածքով, կոտրատւելով խմբւում են երգիչ աղջիկների շուրջը, առանց երբէք կարողանալու բնութեան այս պարզ զաւակներին շլացնելու։

Հռօն որքան սէր ունի դէպի մուսան, նոյնքան, եթէ ոչ աւելի, երկրպագու է Բաքոսին։ Գինին նրա ուրախութեան և տրամութեան ժամերի անբաժան ընկերն է։ Եթէ տօն օր է, երբ պէտք է ուրախանալ, մի քանի քաղցր ժամեր վայելել, խկոյն հանդէս է բերւում գինու «կաւը» (հողէ անման գինու համար շինւած) և սկսւում է կարելի է ասել մի վայրենի խրախճանութիւն։ Եթէ նրան որ և է թշւառութիւն է պատահել—գործերն անաջող են, ցանքերը կարկուտը փչացրել, լծկանները տարափոխիկ հիւանդութեան զոհ գնացին և նրա «ձեռքը ծոցումը թողին», կամ մի այլ անսպասելի բնական թշւառութիւն պատահեց, որով սիրտը վշտով լցւած է, նա դարձեալ խմում է, որովհետև անհրաժեշտ է այդ միջոցով ցրել թախիծը. իսկ եթէ բախտը նրան ժպտացել է, բերքերը աջող են կամ մի տարադէպ աջողութեան մէջ է գտնւում, նա այս դէպքում էլ խմում է, որովհետև ուրախ է։ Սուրմալուի գինին առհասարակ գովւած չէ, այս պատճառով վերջին տարիները հողի զգալի սակաւութեան պատճառով հաշւող խոյեցիք իրանց խաղողի այգիներն աւերեցին և վարելահող դարձրին մեծ մասամբ. բայց Հռօին փոյթ չէ, լաւ թէ վատ գինի է ստանում, նա իր այգին չի աւերիլ, իր տան բարիքը չի վերջացնիլ։ Այժմ մեծ քանակութեամբ գինի է պատրաստւում Հախւերիս և Ամարաթ Հռօ գիւղերում գլխաւորապէս և առհասարակ բոլոր գիւղերում։ Լցնում են կարասները շարիշար և ինչ էք կարծում, գինու այդ ահագին քանակութիւնն աւելի իրանք են խմում, քան թէ վաճառում, մանաւանդ որ վաճառելուն արգելք է լինում և գինու վատութիւնը։ Տօն օրերին, մանաւանդ Ծննդեանն ու Բարեկենդանների, Զատկին, բաց են անում օրհնեալ ըմպելիքի կարասների բերանները և խմում են ու խմում, շատ յաճախ ոչ թէ բաժակներով, այլ հողէ ամաններով, որոնք քերեղան են կոչւում։

Եւ Հռօ գիւղերում բաւական տարածւած է սրբեցողութիւնը, (թէև սա երբէք այն ծաւալը չունի, ինչ որ ռուս գիւղերում) որից և շատերն աղքատացել են և աղքատանում են, բայց առանց խրատւելու շարունակում են նոյնը, որովհետև գինին նրանց կարծիքով կատարեալ անհրաժեշտութիւն է, որ կտակւած է Նոյից, որը թէև գինով հարբել է և անվայել վիճակի մէջ ծաղրի ենթարկւել, բայց և այնպէս օրհնել է նրան։ Իւրաքանչիւր գիւղ ունի և իր առանձին գինետունը, ուր վաճառւում է ուրիշ տեղից բերւած լաւ գինի և օղի, կարծէք իրանց սեփական գինին բաւական չէր։ Զանազան գործերով Իգդիր գնացող Հռօների մեծ մասը անպատճառ խմում են և յետոյ վերադառնում ձիու վրայ օրօրւելով, մանաւանդ եթէ տօն օր է, կամ թէ դատարանում մի գործ են ջողացրել։

Հռօները պարապում են միմիայն երկրագործութեամբ և անասնապահութեամբ այն չափով միայն, որքան անհրաժեշտ է ուտելու համար մածուն ու իւղ՝ ըստ իւրեանց «թացան» և դաշտերը մշակելու համար լծկաններ ունենալու։ Հռօն որչափ անշնորհք է վաճառականութեան մէջ, նա նոյնքան շնորհալի երկրագործ է բաւիս բուն նշանակութեամբ, մանաւանդ որ Հռօները պանդխտել չգիտեն և ներքին գաղթականութիւնը սրանց ծանօթ չէ անգամ, չընայելով որ Հողի ըզգալի սակաւութիւնը կարող էր այդ բանին պատճառ դառնալ։

Առհասարակ նկատւած է, որ Արարատի ոստքում, նրա Հովանու տակ ապրող ժողովուրդը սովոր չէ իր երկրից հեռանալ, իր ընտանիքից բա-

ժանւել։ Այրարատցիք բազմանում են, բաժանում են հօրից մնացած ժառանգութիւնը, նախկին հօրական տան տեղը շինում են մի քանի փոքրիկ-փոքրիկ տներ, այգին բաժանում են ամենամանր կտորների, հողերը նոյնպէս, և անասելի տանջանքներով աշխատում են գլուխները պահել, առանց երբէք գաղթականութեան մասին մտածելու. և Սուրմալուն չունի պանդուխտ զաւակներ։ Նոյն իսկ Պարսկաստանից գաղթած խոյեցիք և սալմաստցիք, որոնց սլապերը և նոյն իսկ հայրերը մինչև իրանց կեանքերի վերջը պանդխտութեան զաւազանը չեն ձգել, տասնեակ տարիներով ընտանիքի երես չեն տեսել, հազարաւոր վերստեր են չափել, ով գիտէ, ինչ արկածախնդրութեամբ և ոչ երբէք հողի նւազութիւնից ստիպւած, նրանց որդիքը գաղթելով, Արարատի ոտքերի մօտ սփռւելով՝ միանգամայն մոռացել են իրանց ժառանգական այդ տգեղ սովորութիւնը, և միանգամայն ձեռք վերցրել պանդխտութիւնից, մինչդեռ բուն Սալմաստում և Խոյում մինչև այժմ էլ շարունակւում է պանդխտութիւնը։ Արարատը կարծես մագնիսական զօրութիւն ունի, որով պինդ բռնում է իր զաւակներին և հայերը չեն հեռանում սրբազան լեռան ստորոտից, Մայր Արաքսի յեղյեղուկ ափերից և ս. Էջմիածնի սրբազան հովանու տակից։

Դէպքեր եղել են, որ մի քանի երիտասարդներ իրանց ծնողաց կամ առհասարակ ընտանիքին աջողութեամբ օժանդակելու համար դիմել են դէպի Թիֆլիս մշակութիւն անելու. և ինչ, չէ անցնում 1—2—3 տարի և ահա, այն գուցէ և առանձին ցանկութեամբ պանդխտութեան դիմողը վերադառնում է հայրենիք այլ ևս ընդ միշտ նրանից չըհեռանալու համար և որ գլխաւորն է և ամենից ցանկալին, իսկոյն ամուսնանում է։ Ղարիբութիւնը նրան շատ փառաւոր դաս է տըւել, և նա այնուհետև երբէք ոչ ոքի խորհուրդ չի տալիս պանդխտութեան դիմելու։

Եւ այսպէս Սուրմալուի հռօն կապւած է իր հայրենիքին, նա այնքան սիրում է իր հողն ու ջուրը, իր եզն ու գոմշուկը, որ կարելի է ասել, պաշտում է սրանց։ Օրինակ հռօին մահու չափ վիրաւորել կընշանակէ, եթէ մեկը նրա եզանն ու գոմշին գէն նշանակի, կամ ծախելու մասին հարցնի, եթէ ինքը ծախելու մասին չի յայտարարել. այդպիսի վարմունքը նա բացարձակ թշնամութիւն է համարում դիմացնի կողմից, մանաւանդ՝ որ մի ընդհանրացած կարծիք կայ թէ ինչ անասունի գէն նշանակւեցաւ, ծախելու մասին խօսք եղաւ, այն անպատճառ պէտք է վաճառել, եթէ չեն կամենում, որ այդ անասունը վնասւի։ Այդ բաւական չէ, աչքի ընկնող անասունին բացարձակ գովելն անգամ ներելի չէ համարւում, կարելի է անել այդ բանը՝ «Աստծու աչքը վրան լինի», կամ «մաշալլահ» նախադասութիւնից յետոյ, օր. «մաշալլահ, ձիդ լաւ է փախչում»։

Առհասարակ ինչպէս էլ ասելու լինես, նրան աւելի ցանկալի կլինէր, որ նրա անասունն ամենևին չըգովաբանւէր, բազմաթիւ աչքեր չըսեւեռւէին նրա վրայ. նա համոզւած է, որ այդքան աչքերից գէթ մեկը կարող է «չար լինել» և «չար աչքի» տէրերը յայտնի են գրանց մէջ. այդպիսիներից աշխատում են պաշտպանւել զանազան հնմայական միջոցներով, օրինակ՝ մի գունդ խմոր են ձգում վառած թոնիրը, որ երբ տրաքւում է, դա նշան է թէ չար աչքը պատւեց և այլն։ Բազմաթիւ անէծքներ գոյութիւն ունեն հռօների մէջ, որոնք յատկապէս ուղղւած են թշնամու լծկանների, կթանների դէմ. օրինակ «գոմէշդ մըրըան չորնայ» կամ «կապի վրայ չորնայ», «լուծդ գետինը մնայ», «լծկանդ մուռատաւի» (մուռատաւել է կոչւում, երբ անասունը սատկում է առանց վիզը կորելու) և այլն։

Անասունների խնամքն անսահման է, կարելի է ասել, որ ոչ մի գիւղացի այնպէս չի կերակրւում, իր անձն այնքան մաքուր չի պահում, ինչպէս իր լծկանը կամ կթանն է կերակրում և պահում թէ ամառը և թէ ձմեռը։ Ամենայն օր լւանում է իր գոմշուկները, լաւ կշտացնում է յաճախ ուրիշի արտերը ուտացնելով, իսկ ձմեռը չաղացնում է կռով (բամբակի կորիզ—կուտ). որչափ սիրում է հռօն իր անասունները, այդ կարելի է իմանալ եթէ ականատես լինենք այն անսահման երջանկութեանը, երբ գիւղացին գարնանը առաջին անգամ գոմից բաց է թողնում իր կատաղած գոմշուկները, որոնց ճակատին նախապէս մի մի ձու է զարկում։ Զարմանալի է այս բոլորից յետոյ այն բարբարոս վարմունքը, որ հռօն ունի դէպի իր անասունները. գթութեան կատարեալ բացակայութիւն է դէպի այս աշխատաւոր մշակները—անասունները։ Փայտի մի հարւածով բարկացած ժամանակ փշրել սիրելի եզան կամ գոմշի եղջիւրը, կուրացնել աչքը, ահագին մահակի հարւածով հաշմանդամ դարձնել խեղճ անասունին—բոլորովին տարօրինակ երեւոյթ չէ։ Անասուններին տւած տանջանքի մասին գաղափար կազմելու համար պէտք է տեսնել կաշւից հիւսած այն հաստ խարազանը, կապւած ահագին մահակի ծայրին. մարդ սոսկում է, երբ այդ խարազանն անախորժ վիժոցով փաթաթւում է անասունի մէջքին և փորին և սաստիկ հարւածով հաստ կաշեայ ծայրով անասունի պորտին դիպչում՝ ահագին վերք բաց անելով։ Շատ անգամ լծւած անասունը ծեծւում է ըստ հաճոյքի, երբ տերը ոգևորւած է, երբ գոմէշը գեղեցիկ է և ուժեղ և պիտի ցոյց տայ իր շնորհքը, երբեմն իր երգի իւրաքանչիւր զարկի հետ նա անգիտակցաբար հարւածում է անասունին, որովհետև ձեռքը սովորել է և հարւածը լաւ ձայն է հանում։ Մանաւանդ վայ անասունին, որ լծւելու ժամանակ անհնազանդութեան նշաններ է ցոյց տւել, հէնց որ սամիները կապւեցին, սարսափելի կերպով կըծեծւեն։ Եթէ գաւառում անասուններին հովանաւորող ընկերութեան ճիւղեր լինէր, համարեա իւրաքանչիւր երկրագործ ամենայն օր տուգանքի կենթարկւէր։

Դէպի հողը, որպէս իր ապրուստի անսպառ աղբիւրը, հսօն այնպիսի մեծ հաւատ ունի, որ նրան ոչ մի կերպ դրանից բաժանել չի լինի և եթէ իր արօրը վարեց, ցանեց, ջրեց՝ նա արդէն իր ապրուստն ապահոված է համարում, որովհետև նա գիտէ, որ մայր երկիրը նրան չի դաւաճանիլ, եթէ Աստուած հաշտ է իր հետ։ Ցանում են գլխաւորապէս ցորեն, բամբակ, կնճիթ, կորեկ, գարի, ճաւար, կտաւհատ, առւոյտ և մեծ քանակութեամբ բոստաններ։ Այս բոլորի մէջ աչքի ընկնող տեղն են բռնում իրանց առատութեամբ ցորենը, բոստանները (սեխ-ձմերուկ) և վերջին տարիները բամբակը, որն երկու տեսակ է—ամերիկական և ֆրանսիական տեսակներ, վերջինը գերակշռող է։ Բամբակը միակ բերքն է, որ արտահանւում է Սուրմալուից, իսկ ցորենը հողի սակաւութեան պատճառով նւազ է ստացւում և դրա արտահանութիւնը կարող է միայն ի վնաս տեղական բնակչաց լինել։ Այս բերքերի մշակութիւնն առանձին դժւարութիւնների հետ է կապւած, մանաւանդ՝ որ խեղճ գիւղացիներին միանգամայն անծանօթ են մշակութեան նոր և աւելի կատարելագործւած միջոցների, ուստի և ամեն մի գործ և աշխատանք կատարւում է նահապետական գործիքներով, ձեռքի ոյժով և անասուննների աշխատանքով։

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

(Վերջը յետոյ)

ԿՆՈՋ ՎԻՃԱԿԸ *)

(Նմանողութիւն Վ. Ոդոևսկուին)

—

Երբ որ նա տան մէջ փակւած ապրում էր
Ինչպէս սարուկը կամ անարգ գերին,
Աշխարհքը գոհ էր և միշտ ասում էր
—Հաւատարիմ է նա իր պարտքերին։
Թէև շատ անգամ վավաշոտ կրքով
Ծածուկ սրձում էր նա իր առագաստ.
Բայց ներում էին մարդիկ ասելով.
—Այդ ոչինչ, չէ՞ որ սէրն է խիստ անսասան։
Երբ որ փայլում էր նա խնճոյքներում
Պճնւած զարդով ինչպէս խաղալիկ,
Ասում էին—նա քնքուշ է, սիրուն
Ինչպէս դաշտային անհոգ թիթեռնիկ։
Եւ թէև նորա սէրը արծաթով
Կարէր ամեն ոք գընել դիւրաբար.
Բայց ներում էին այդ էլ՝ ասելով
—Չէ՞ որ նա ծնւած է սիրոյ համար։

Բայց ահա մի նոր, մաքուր ճանապարհ
Փրւած նկատեց նա իր առաջին.
Եւ կամեցաւ նա մի ուրիշ պայծառ
Իդէալ կազմել իր անմիտ կեանքին։
Մատաղ հասակի բոլոր ուժերով
Անձնատուր եղաւ նա սուրբ գիտութեան.
Թողեց խնճոյքն իր վայելքներով
Առաւ դրօշը քաղաքացիութեան։
Բայց քանի էք կարծում. խելօք աշխարհքը
Ներեց այդ նորան. ոչ, ընդհակառակը
Փրփուր բերանին գոչեց անխընայ՝
—Ցիմար է կինը, անուռակ է նա։

1887 Նոյեմ. 11-ին
Ս. Պետերբուրգ.

ԽԱՌԱ—ԽՐԽԱ. *)

Պատկեր

Գ.

Էմէրը սիրահարւել էր Էմալի վրայ, նրա հանգիստ ու դադարումը կորւել էր։ Երկու-երեք անգամ միջնորդ էր ուղարկել Նունալի մօտ, բայց սա նրանց նախատելով տանից դուրս էր արել։ Էման էլ մի քանի անգամ երիտասարդի բարձր հասակը, ուժեղ կազմւածքը տնտղելուց ու տեսնելուց յետոյ կակղել էր, այնպէս որ եթէ մի ճարպիկ փորձ ևս կատարէր Էմէրը, աղջիկը կըփախչէր նրա հետ, բայց Մամօի կացնի առաջ գլուխ ցոյց տալը, նամանաւանդ Նունալի ճանկերից աղջիկ փախցնելը հեշտ չէր։ Էման դալարւում էր, տանջւում, երբ Նունան նախատելով ու անարգելով արտաքսում էր միջնորդներին։

Մէկ երկու անգամ կարողացել էր Էմէրը մօտենալ Էմալին և մի քանի խօսք ասել, բայց թշւառ աղջիկը երկիւղից ու ամօթից ներս էր փախել առանց մի որոշ պատասխան տալու։ Քանի քանի անգամ, գիշեր թէ ցերեկ փողոցից, տանիքից Էմէրը զննում էր Էմալին, տեսնում էր նրան համեստ զարա-խրխան հագին բանի-գործի մէջ և յաճախ տխուր և սրտառուչ երգելիս։ Այդ բոլորը այն աստիճանի բորբոքեց Էմէրի սիրտը, որ բոլորովին մոռացաւ իր կնոջը, այնպէս որ երկու, երեք օրով նրա երեսը չէր տեսնում։ Երբ սև ու դեղնած կինը՝ Ալի էֆէնդիի աղջիկը դէմն էր գալիս, իր զար խառա-խրխաներով ու սլաճուճանքներով, նա զզւանքից երեսը շուռ էր տալիս ու դուրս փախչում տանից։

Էմէրի կինը մարդուց չըսիրւելը վաղուց

*) Անյայտ հեղինակի ձեռագրից։

*) Տես «Տարազ» № 38.

Ախթամարի վանքը.

գիտէր, իսկ այդ աստիճանի առնելուց յետոյ, թողէց գնաց հօրանց տունը, ծնողների մօտ լալու իր անբախտ գլուխը։ Բայց նախանձից ու խանդից ստիպուած հետևում էր ամուսնին լրտեսներով։ Վերջապէս մի օր իր լրտեսները տեղեկութիւն բերին, որ փայտահատ Մամօի և հացթուխ Նունայի աղջիկն է գրաւել իր ամուսնին, և որ նրանց տունն մտել Իսմէրը այդ ժամին։ Կատաղութիւնից բորբոքուած սկսեց մազերը փետրել և դիմեց Նունայի տունը տեսնելու իր ախոյեանին։

Առաջի անգամ էր մտել Իսմէրը Նունայենց տունը, սրտագող և ալլալուած։ Եսման մօր ահից գնացել մտել էր մարաքը և թագնուել լուացքի տաշտի ետևը։ Նունան զայրալի դիմաւորել էր նրան գոռալով.

—Ինչ ունիս դու իմ դրանս, դուրս, դուրս կորի, անխիղճ անօրէնի որդի, քանի ձայնս աշխարհք չէ իմացել, թէ չէ հիմի այնպէս կրգոռգոռամ, որ դուս դրացի բոլորն ներս կը թափուեն, և էնպէս կրխայտառակեմ քեզ, որ յաւիտեան էլ մարդու երեսին չկարողանաս դուրս գալ։

—Նունա բաջի, խիղճ ունեցիր, գութ ունեցիր, կուզես առ կացինը՝ մէկ անգամ զարկ սպանէ։ Թող երկու խօսք ասեմ, երկու խօսք։ Վ'Ալլահա (Աստուած վկայ) կըգժուեմ, գլուխս կըսպանեմ, թէ Իսմայիլն ինձ չըտաս...

—Դուրս կորի, ասում եմ, դուրս, ես աղջիկ չունիմ, որ դումա (երկրորդ կին) տամ, գնա, իմ աղջիկս ձեր դռներից ներս չի մտնիլ։ Դուք քառասուն դուռ ունիք, քառասուն շուն ու գայլ է մըտնում ձեր տունը։ Մենք խրճիթում ենք մեծացել և մեր միակ փոքր դռնից աղաները ու բէգեր չեն կարող ներս սողալ։

—Նունա բաջի, ահա քսակս, ինչ որ ուզում ես կաթիդ վարձ՝ ստացիր ու խղճա ինձ վրայ. վեց ամիս է՝ ես հալւեցի մաշւեցի, տուր ինձ աղջկադ։

—Կորիր, անօրէն, ինձ պէտք չեն էն փողերը, որ քու հայրդ ողջ երկիրը քաղցած, սոված լացում, սգում թողնելով է դիզել։ Տար այդ ոսկիները, հալեցուր, լից հօրդ կոկորդը, թող կշտանայ։ Բաւական է, դուրս։

—Նունա, Վ'Ալլահա, Ալի էֆէնդու աղջկան արձակել եմ, շուտով նիքահն (ապահարզան) էլ կըտամ, հօրս տունն էլ կըթողնեմ, միայն թէ մի մերժիլ, մի ինձ խելագարւած դուրս վանիլ քու յարկի տակից։

—Ո՛չ թէ աղջիկ, քառասուն շան կուտալ էլ որ ունենայի, մէկը քեզ չէի տալ։ Անխիղճի զաւակ, անգութ, հալածւ է, փոխնորդ է Ալի էֆէնդու աղջիկը, որ նրան, դեռ երեք տարի չըկայ կարգւելդ, շպրտել ես։ Ի՞նչպէս Հաւատամ, որ երեք ամիս յետոյ էլ նոր առած կնկադ չես դուրս անելու։

—Ես նրան չեմ առել, Նունա-բաջի, ինձ նրա վրայ ծախել է հայրս, ես զզւում եմ նրանից, ես...

—Ուրիշ դուռ գնա, էֆէնդիների, աղաների, բէգերի տների մէջ վինտրիր քեզ ընկեր, փայտահատի աղջիկը իր եղբայրների արիւնքի գնով գընւած զար խառա-խրխաներ հագնելու սովոր չէ։ Դուրս, գնա, հերիք է...

Թէև ասում էր Նունան, բայց չէր կարողանում բունի կամ մեծ աղմուկով դուրս անել տնից Իսմէրին, վախենալով որ չըլինի թէ իր ձայնը լսեն դրացիները և բամբասանքի ենթարկեն։ Աղքատութիւնն ինքն ըստ ինքեան բաւական պատճառ է անթիւ կասկածանքների։

Եւ յանկարծ այդ տատանման ժամանակ բակի դուռը բացւեց և մի աղախնի հետ ներս մըտաւ Ալի էֆէնդու աղջիկը՝ Իսմէրի կինը գոռալով.

—Անառակներ, պոռնիկներ, մի թէ չէք ամաչում, որ ամուսնացած մարդուս խելքից հանել էք, գրաւել էք ու գիշեր-ցերեկ ձեր խրճիթից դուրս չէք թողնում։

Նունան իսկոյն նրա առաջը կտրեց, չըթողեց, որ ներս մտնի ասելով.

—Անառակն էլ, անպարկեշտն էլ, պոռնիկն էլ դու ես, որ ապրում ես էն մարդու հետ, որ քեզ չէ սիրում և առանց ամաչելու, փոխանակ գետնի տակ մտնելու, եկել ես ինձ վրայ կռւի։

Իսմէրը մի կողմը քաշւած՝ պատի տակ կանգնած էր կատաղութիւնից դողդողալով։

—Լիրբ, անզգամ, բաւական չէ, որ դիւթել թալիսմել էք մարդուս, առաջս էլ կտրում ես, ճանապարհս էլ բռնում ես, որ ներս չըմտնեմ և չըխայտառակեմ երկուսիդ էլ...

Էլ չըկարողացաւ համբերել, առաջ եկաւ Իսմէրը և կնոջ թևից բռնելով դուրս շպրտեց։ Կինը երկիւղից, բարկութիւնից և կատաղութիւնից ուշքը կորցրեց։ Իսմէրը թողեց հեռացաւ, մըրմընջելով.

—Օձի ծնունդը կեանքս թունաւորել է...

Պառաւ աղախինը ջուր սրսկելով, արօրելով մի կերպ սթափեցրեց իր տիկնոջը։ Ալի էֆէնդու աղջիկը դողդողալով, բախտն անիծելով հազիւ տուն հասաւ։

Այս տեսարանից յետոյ այնպէս բորբոքեց Նունան, որ չէր իմանում ինչ էր շինում։ Իս-

մային բոլորովին արգելեց տնից դուրս գալ, շատ անգամ դրացիները գործի կանչելիս՝ մերժում էր, եթե աղջկան էլ գնացած տեղը հետը չէր կարող տանել։

Իսկ սովն աստիճանաբար սաստկանում էր, ամեն կին իր տան գործն ինքն անձամբ էր կատարում, որպես զի պարտաւորւած չլինի իր զաւակների պատառը բաժանել չունեւոր բանանողների հետ։

Նունայի գործերը, որ կիսաւած էին, վերջերքը համարեա թէ սպառւեցին։ Գործ չունէր նոյնպէս Մամօն, երկու-երեք օրը հազիւ մի սայլ փայտ էր պատահում կոտորելու։ Սովն այն աստիճան սաստկացաւ, որ սարի կանանչները արմատներով կերան ու լափեցին աղքատները, այնպէս որ առաւօտները խումբ խումբ կանայք գնում էին դաշտերը, իրիկունները վերադառնում։ Թաղերումը հաւ, գառ, հորթ չըմնաց՝ բռնեցին և մորթեցին. ով ինչ ճանկում էր, էլ չէր մտածում, թէ իրանն է թէ ուրիշինը, խոյն քերթելու և եփելու պատրաստւթիւն էր տեսնում։ Շատ անգամ խումբ խումբ կանայք այնքան էին հեռանում քաղաքի սահմանից, որ պատահում էին գիւղական հովիւներին, խնդիրքով կամ բռնի կթում էին նրանց անասուններին ու յագեցնում իրանց քաղցը։

Նունան այս բոլոր միջոցներից էլ զրկւած էր, ոչ կարող էր դրացիների մօտ բանի գնալ, ոչ էլ դաշտ դուրս գալ, նա վախենում էր անակնկալ յարձակումից, իսկ զաւակներն անդադար գոռում էին.

—Մայրիկ, սովածենք, մայրիկ, հաց...

Չէր իմանում թշւառ կինն ինչ ելքի դիմել։ Մամօն առաւօտը վաղ՝ դեռ երեխաները քնած հեռանում էր տնից, իրիկուններն եթէ հաց գտնում էր՝ շուտ տուն էր վերադառնում, հակառակ դէպքում՝ մէջ գիշերին մի կերպ ներս էր սողում և արշալոյսին կրկին աներեւոյթանում։

Ամբողջ օրը, բազարում, բաց օդում, արևի ու անձրևի տակ, սրա-նրա դրանը տանջւելուց յետոյ, գիշերը հանգիստ քունն էլ չէր գտնում թշւառ մարդը։ Մինչև լոյս մրմնջում ու հառաչում էր Նունան, հալւում ու մաշում իր հետ դարաքաշ մարդուն։ Էլ համբերութիւնը կտրւել էր, նա աղաւ յարձակւում էր Մամօի վրայ, նախատում էր և անարգում նրա անճարակութիւնը...

—Ա՛յ մարդ, ողորմականի նման ասաց Նունան մի գիշեր անկողնում Մամօին, էսպէս չէ կարելի, երեխաները հալւեցին ու մաշւեցին, ծծիս աղջիկը երեք օր է՝ տանջւում է, պէտք է ճար անել, մի չլալ ալիւր գտնել... Գնա պարտք վերցուր, փոխ առ, մի բան արա։

—Նունա, ես ո՞ւմ դուռն երթամ, հիմի ամեն մարդ իր գլուխն է մոռացել, հայ ու ալիւր ունեցողների սրտում էլ ո՛չ խիղճ է մնացել, ո՛չ գութ։ Երեք հարիւր ղուրուշ կանխիկ փող է պահանջում Հաջի-Աբդալը, երեք օջիլ չունեմ, երեք փալլուն ոսկին ես ո՞րտեղից գտնեմ...

—Չեմ հասկանում, թէ էդ դուք ինչպէես մարդ էք, ողամարդու շնորհք չըկա՞յ ձեր մէջ, դուք հոգի չունէք։ Դուն ինչպէես դարդակ տուն դարձար գիշերս, քանի որ գիտէիր, թէ երեխաներդ երեկ երեկւանից քաղցած են քնել։ Ամբողջ օրը ինձ քցցեցին—քաղցած ենք—գոռալով։

—Օ՜ֆ, ասաց սրտի խորքերից հառաչելով Մամօն։

—Օֆով չեն կշտանում երեխաները, ա՛յ մարդ, գնա գլուխդ ծախէ, ճարը գտիր...

Մամօն անմռունչ հառաչում էր, լեզուն չէր շարժւում, որ պատասխանէր։ Նունայի ծծի երեխան մինչև լոյս անդադար նֆում էր և երբեմն երբեմն տարօրինակ ձայներ հանում։ Երեխայի տանջանքը մայրը նկատելով՝ բարձրացաւ, որքան աշխատեց ծիծ տալ, հնար չեղաւ։ Լուսադէմին նֆաց, նֆաց ու հանգեցաւ։ Նունան կատաղութիւնից չէր իմանում՝ ինչ անել։ Նա չէր արտասւում, նրա աչքերը կարմրել, արիւնով էին լցւել։ Այդ նկատելով Մամօն՝ բոլորովին մոլորւեց։ Իսման ծնողների հետ վեր էր կացել ու սկսել սովորականի նման տուն, դուռ մաքրել։ Յանկարծ ներս մտաւ խեղճ աղջիկը մի քսակ ձեռքին։ Նունան իսկոյն ճանաչեց Իսմէրի քսակը ու գոռաց.

—Գետինը մտնես, էդ ինչ քսակ է. հիմի քեզ կըխեղդեմ, քրոջդ քովը կըերկնցնեմ։

—Մայրիկ, բակումը գտած էր, աւելիս գտայ։

—Սուտ ես ասում, կատաղած դէմքի մկանները ծրմռելով վրայ հասաւ Նունան և Իսմայի ձեռքից առաւ քսակը։

—Վ՛Ա՛յլահա, մայրիկ էնտեղ ընկած էր, ասաց թշւառ աղջիկը լացակումած։

Մինչև որ Նունան կըմտածէր, որ քսակը Իսմէրը նպատակով կարող էր ձգած լինել՝ ամուսինը վրայ պրծաւ, քսակը կնոջ ձեռքից առաւ, բերանը բացեց ու միջի ոսկի լիրաները դարդակեց բուռը։ Այս աղմուկից զարթեցաւ Սուլօն ու սկսեց լալ, կանչել.

—Մայրիկ քաղցած եմ, Նունա, սովածեմ...

Մամօն իսկոյն մի կէս ոսկի անոց առաւ, մնացեալը քսակը լցնելով՝ վայր ձգեց կնոջ ոտների

տակ ու վազեց դէպի փուռը։ Բակից անցնելիս անզգալի կերպով անբաժան կացինն առաւ ուսը, այնպէս դուրս եկաւ տանից։

Այդ ժամանակները մէկ-երկու փուռի հացերը մի քանի անգամ սոված ամբոխը աւարի տւած լինելով, բոլոր փռնչէները էլ բաց չէին թողնում իրանց փուռերի մեծ մեծ փեղկերը և դռները, այլ շինել էին տւել այդ փեղկերի վրայ մարդու գլուխ մտնելու չափ փեղկիկներ, որտեղից ստանում էին փող և հացը տալիս։ Փուռերի մեծ մասի տէրերը ալիւր չ'ունէին, բայց և Հալչի-Աբդալի առաջարկած պայմաններն էլ յամառած չէին ընդունել և փուռերը փակւել էին, այնպէս որ մնացեալ փուռերը գիշեր ցերեկ հաց եփելով՝ դարձեալ բաւականութիւն չէին կարողանում տալ ժողովրդի պահանջին։ Ամեն ժամանակ ահագին բազմութիւն հաւաքւած էր լինում փուռերի դրան առաջ, և կանխիկ փողերը ձեռքերում հերթով, կռւով, գոռգոռալով հազիւ կարողանում էին գնել ամենօրեայ հացը։

Մամօն ժողովրդին հրելով, հրմշտկելով հազիւ մօտեցաւ փռի փեղկին ու կէս ոսկին երկընդնելով ասաց.

—Ուստա՛, շտապիր, հինգ հոխա հաց տուր, տանն երեխաներս սոված կոտորւեցին։

—Ա՜յ տղայ, այս ոսկին կեղծ կըլինի, ասաց փռնչին փայտահատի դէմքը մի լաւ զննելով։ Դու մի քիչ համբերէ, թող մեծ ուստան փողդ կշռէ և քննէ։ Տէ՛ք, տէ՛ք։

—Ուստա մի հոխա՛ հաց,—և մի ուրիշը թաշկինակը երկնցուց հացագործին, որը թաշկինակի ծայրը բանալով՝ փողերը համրեց ու ասաց.

—Ա՜յ մարդ, այստեղ երկու զուրուշ միայն կայ, հիմի հոխան իննսուն փարա է, տասը փարա էլ տուր։

—Ուստա՛ չունեմ, քիչ պակաս տուր։

—Հիմի ես հայն ինչպէս կարեմ, ինչպէս կշռեմ, առ փողերդ։

—Տէ՛ք, տէ՛ք։

—Ախար, ուստա՛, քեզ ասի տանը սոված կոտորւում են երեխաներս, այս մարդու տասը փարան էլ իմ հաշւից ստացիր, միայն շուտ արա, շուտ արա, տո՛ւր։

—Ա՜յ մարդ, քիչ սպասէ, ուստան հիմի վայր կըգայ ու կըկշռէ քու ոսկին։ Տէ՛ք, տէ՛ք։

Անդադար փռնչին առնում էր թաշկինակները և հացերը մէջը դնելով՝ դարձնում տէրերին։ Կիսատ փող ունեցողները պարտաւորւած էին սպասելու և անդադար գոռում, գոչում էին—Ուստա, հա՛յը, ուստա հա՛յը։

Փռնչին առանց ուշադրութիւն դարձնելու կրկնում էր—տէ՛ք, տէ՛ք...

—Ուստա՛, գոռաց կատաղած Մամօն, ուստա, կէս ոսկիս, հաց, շուտ արա, տանն երեխաներս կոտորւեցին...

—Սպասէ, քիչ էլ սպասէ, տէ՛ք, տէ՛ք...

—Գեաւո՛ւր, քանի պիտի սպասեմ, անհաւա՛տ, շուտ արա, երեխաներս կոտորւեցին։

—Ես անհաւատ չեմ, ասաց ներսից փռնչին, քու ոսկիդ կասկածելի է. թէ չես ուզում սպասել, ետ առ, գնա՛։ Տէ՛ք, տէ՛ք։

—Անօրէ՛ն, այդ փողին քո՞նչ է եղել, որ պատճառ ես բռնում.

—Ուստա, հաց տուր, տասը փարալի պակաս տուր՝ երթամ։

—Կշռելու ժամանակ չունիմ, կուզես տուր ամբողջ հոխայի գինը, թէ չէ՝ չըկայ, ետ առ փողդ։ Տէ՛ք, տէ՛ք։

—Տեսնո՞ւմ էք այս անհաւատներին, ինչպէս են տանջում մեզ, այս քո՞նչ օրը մնաց Իսլամը, ասաց մի ծերունի կատաղած։

—Ուստա՛, կէս ոսկին, հաց, դեաւուր չեմ իմանում։

—Աւել պակաս խօսել պէտք չէ... Տէ՛ք, տէ՛ք։

—Քու օրէնքդ, քու հաւատդ... քեզ կռնակ եղող աղաների, էֆէնդիների... գոռգոռալով, հայհոյելով փայտահատը սկսեց կացնով ջարդել փռի փեղկերը։ Մի ակնթարթում բոլոր տախտակները փշրեց, ժողովուրդը ներս խուժեց և ինչքան որ հաց կար՝ ցրւեց։ Մամօն կատաղած մի քանի հարւածներ էլ իջեցրեց փռնչիներին, որոնք երկիւղից ներս մտան, ալիւրի ամբարի տակ թագնւեցին, և մի գիրկ հաց շալակած վազեց տունն։

Մամօի օրինակին հետևեց ամբոխը և մինչև ոստիկանութեան միջամտելը, մինչև փաշային, էֆէնդիների և Հալչի Աբդալի օգնութեան հասնելն՝ այդ օրը հինգ-տաս փռի փեղկերը փշրւեցին և հացերը ցրւեցին։

Ալի էֆէնդու և Հալչի Աբդալի թախանձանքների համաձայն՝ փաշան իսկոյն քննութիւն նշանակել տւեց և այդ իրիկուն բանտարկեցին փուռերի աւարի տուողներից մօտ հարիւր չիսուն մարդ, դրանց թւում և Մամօին։

ԱՏՐՊԵՏ

(Կըշարունակւի)

ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԷՒՈԼԻՒՑԻԱ ԵՒ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ *)

IV

Միլետի իմաստունները աշխատում էին իրանց զբաղեցնող հարցերին բաւականութիւն տալ բնութեան հետ ծանօթանալով։ Նրանք այն կարծիքի էին, թէ բարոյականութիւնը նոյնպէս զարգանում է էւոլիւցիական ճանապարհով։ Նրանց մէջ ամենանշանաւոր էւոլիւցիոնիստը Հերակլիտ Եփեսացին էր։

Բայց երբ յունաց մտաւոր կեանքի կենդրոնը տեղափոխուեց Աթէնք, առաջնակարգ մտածողները դարձրին իրանց ուշադրութիւնը զուտ բարոյագիտական խնդիրների վրայ։ Նրանք մոռացութեան տուին տիեզերքի ուսումնասիրութիւնը, որպէս զի նախրւեն մարդու (միկրոկոսմոսի) ուսումնասիրութեան։ Այդպիսով Եփեսացի մեծ իմաստունին չըհաւատացան Սոկրատէսը և Պղատոնը։ Սոկրատէսը կարծում էր, թէ փիզիկական խնդիրները մարդկային խելքից վեր են, ուստի ի զուր կ'անցնեն նրանց վրճուելու համար արած աշխատանքները։ Մանաւանդ որ մեր հետազօտութեան արժանի է միայն այն հարցը, թէ ինչպէս պէտք բարոյական կեանք վարել։ Նրա օրինակին հետևեցին կիւնիկները։

Հերակլիտի ուղղութիւնը ժառանգեց Դեմոկրիտը։ Բայց մարդիկ գեռ պատրաստ չէին այդ փիլիսոփայի գաղափարները հասկանալու։ Մարդկանց պատրաստելը ստոիկների բաժինը եղաւ։ Սրանք, հաշուելով իրանց Հերակլիտի աշակերտները սիստեմաբար մշակում էին էւոլիւցիայի գաղափարը։ Բայց նրանք աւելացրին և ինքնուրոյն սկզբունքներ. օրինակ նրանք եկան այն եզրակացութեան, թէ տիեզերքի մէջ գոյութիւն ունի ինչոր հրային եռանդ, որը ներգործում է բնութեան օրէնքների միջոցով, որից ամենը բղխում է ու դէպի որը ամենը դարձեալ ետ է գալիս։ Այդ եռանդը տիեզերքները ստեղծում և կրկին կործանում, որպէս երեխաները աւազից տնակներ են շինում և իսկոյն ցրիւ տալիս։ Այդ եռանդը ունի գաղափարական աստուածութեան բոլոր նշանները, նա ունի ոչ միայն անսահման իրաւունք և անվերջանալի խելք, բայց և կատարեալ բարութիւն։ Յիշեալ սկզբունքից եզրափակեց ի հարկէ այն, որ իսկական, անհրաժեշտ չարիք չէ կարող գոյութիւն ունենալ, քանի որ ամեն ինչ բղխում է «բարի սկզբնապատճառից»։ Այնուամենայնիւ ամբողջ մարդկութեան փորձը թէ այն ժամանակ և թէ այժմ ապացուցանում է, որ եթէ մէկ բան պարզապէս գոյութիւն ունի, այդ՝ տանջանքն է, ցաւը և ամեն տեսակի ստութիւնը։ Ինչո՞ւ համար է այդ բոլորը։ Ստոիկների կարծիքով չարիքը «խակապէս» գոյութիւն չունի, և եթէ նա գոյութիւն էլ ունի, ուրեմն մի բան չէ, բայց եթէ բարիքի թարս երեսը, որ անհրաժեշտ է։ Եւ վերջապէս չարիքը կամ մեր սեփական սխալն է, կամ թէ չէ գոնէ ծառայում է մեր օգտին։ Ստոիկների պատասխանը կարելի է ամփոփել հետևեալ տողերի մէջ։

Բնութիւնը—քեզ անյայտ արուեստ է։

Պատահմունքը—նախավճիռ է, որը դու գուշակել չես կարող։

Անհամերաշխութիւնը—համերաշխութիւն է, թէև քեզ անհասկանալի։

Ամբողջ մասնաւորը չարիքը—միայն ընդհանուր բարիք է։

Եւ ընդդէմ մոլորուող խելքին և նրա հպարտութեանը՝ պարզ է այն ճշմարտութիւնը, թէ ինչ որ գոյութիւն ունի, խելացի է։—Առաջին երեք շարքին հապաւ թէ կարելի է հակառակել, բայց վերջին երեք տողերը խիստ կասկածելի են։ Ի հարկէ շատ անգամ չարիքն էլ բարի հետևանք է ունենում։ Տանջանքն ու ցաւը նոյնպէս շահող, դաստիարակիչ ազդեցութիւն ունին։ Բայց շատ անգամ էլ անթիւ զզացողութիւն ունեցող արարածներ տանջւում են, առանց օգուտ ստանալու իրանց տանջանքից։ Ինչո՞ւ համար... Այդ հարցին ստոիկները բաւարար պատասխան չեն տալիս։ Բայց բոլորովին անհիմն է նրանց այն կարծիքը թէ ինչ որ գոյութիւն ունի, խելացի է։ Բացի այն, որ այդ գաղափարը ոչինչ փաստերի վրայ հիմնուած չէ, նա ինքն ըստ ինքեան էլ վնասակար է։ Եթէ ամեն բան արդէն լաւ է, էլ ինչո՞ւ պիտի աշխատենք կեանքը փոփոխել, բնական ոյժերին այս ու այն գործադրութիւնը տալ։ Բաւականանանք ուտել ու խմելով, քանի որ ինչպէս այսօր է լաւ, այնպէս էլ կըլինի վաղը։

Ուրեմն ստոիկները էլ չըկարողացան մարդկային մտքին բաւականութիւն տալ, թէև փոքր ի շատէ նպաստեցին համաշխարհային խնդրի պարզաբանութեանը։

V

Մենք շատ լաւ ծանօթ ենք—ասում է Հէքսլի—ժամանակակից յոռետեսութեան-պեսսիմիզմի հետ, գոնէ նրա տեսականութեան հետ։ Հէքսլի

*) Տես «Տարազ» № 38.

կարծիքով գործնական պէսսիմիստները մեր ժամանակում գոյութիւն չունին, որոնք ապացուցանէին իրանց յոռետեսութիւնն անձնական կեանքով: Ուստի սրանք միայն տեսական քարոզչութեամբ բաւականանալով՝ իրանք իրանց սկզբունքների անհաստատութիւնն ապացուցանում են: Միւս ծայրայեղութիւնը կազմում են լաւատեսները - օպտիմիստները, որոնք կարծում են թէ կեանքը ինքը էվոլիւցիական ճանապարհով զարգանալով՝ առաջ կըբերէ մի երջանիկ դրութիւն, որի մէջ գայլը և գառը միասին կ'արածեն: Սակայն սրանք մոռանում են, որ եթէ կեանքը զարգանայ միմիայն բնութեան ազդեցութեան տակ, նա կըհասնէ ոչ ցանկալի հետևանքներին: Ի հարկէ այդպիսի զարգացումը նոյնպէս մի քանի լաւ կողմեր կունենայ: Ինչպէս կենդանիների մէջ ոյժի սկզբունքը գործադրելով՝ գոյութեան մէջ մնում են միայն ուժեղները և առողջները, նոյնը կըլինի և մարդկանց մէջ, եթէ մարդիկ բացառապէս բնական օրէնքներով կըղեկավարուեն: Բայց մարդկային կեանքի մէջ բաւական չէ միայն առողջ և ուժեղ լինելը: Մարդը պահանջներ շատ ունի: Նրան հարկաւոր է ոչ թէ առհասարակ միայն կեանք, այլ անպատճառ մի բարձր, վայելուչ, արժանաւոր կեանք, որը անհասանելի է առանց զուտ մարդկային—բարոյական օրէնքների:

Հասկանանք ընդ միշտ—ասում է դասախօսը—որ հասարակութեան բարոյական առաջադիմութեան համար ոչ հարկաւոր է նմանուել բնութեան առաջադիմութեանը, ոչ էլ նրանից փախչել, թեքուել, այլ հարկաւոր է մաքառել նրա դէմ:

Քաղաքակրթութեան ամբողջ պատմութիւնը ցոյց է տալիս, թէ ինչպէս մարդը կարողացել է քայլ առ քայլ ստեղծել իր արուեստական աշխարհը միեզերքի մէջ: Մարդը խելք, գիտակցութիւն ունի, որով կարողանում է բնութեան ընթացքը փոխելով՝ յարմարեցնել իր բարոյական կեանքին: Մարդկային ցեղի առաջին ընտանիքներն արդէն սահման են դրել բնութեան կամքին և ստիպել են նրան գնալ որոշ պահանջների համեմատ: Շըրջապատող բնութիւնը սահմաններ ստացաւ հովւի, երկրագործի, արհեստաւորի ձեռքով: Որքան քաղաքակրթութիւնը ծաղկում է, նոյնքան աւելի խառնուում է մարդը բնութեան գործերին: Ներկայումս բարձր զարգացած հնարագիտութիւնը և խորամիտ գիտութիւնները մարդուն այնպիսի իշխանութիւն են տուել բնութեան վրայ, որպիսին չեն վերագրել և հին դարերի կախարդներին: Օրէցօր աւելի ու աւելի յաղթելով բնութեանը և նրա սանձերը իր ձեռքին կենդրոնացնելով, մարդը կըտիրէ նրան ընթանալ այնպիսի ուղղութեամբ, որ կազմէ երկրագնդի երեսին մի մարդկային զուտ բարոյական և վայելուչ կեանք:

Բայց այդ բոլորի համար մենք մարդիկս մեծ աշխատութիւններ պիտի գործ դնենք:

Հեքսլի վերջացնում է իր ճառը հետևեալ խօսքերով.

«Արդէն անցաւ մեր ցեղի մանկական ժամանակամիջոցը, երբ՝ թէ բարիքն ու թէ չարիքը հաւասարապէս ողջունուում էին մարդկանցից: Հընդկացիք և յոյները չարիքից ազատուելու համար միայն փախչելու (բնութիւնից) միջոցն էին հնարաւոր համարում: Մենք պիտի մի կողմ ձգենք մանկական թեթև ինքնավստահութիւնը և անչափահասներին յատուկ անվստահութիւնը: Մենք արդէն չափահաս ենք դարձել և պիտի տղամարդ լինենք:

Մենք պիտի ուրախանանք այն բարիքով, որը մեզ բաժին է լինում և միւս կողմից ամեն կերպ աշխատենք մաքառելով բնութեան դէմ՝ վերջ տալ մեր մէջ և մեր շուրջը գտնուած չարիքներին»:

Յոյս և հաւատ ունենանք, որ մարդկութիւնը կըհասնի վերջապէս իր ցանկացած վայելուչ կեանքին...

Ս. ԹԱՌԱՅԵԱՆՑ

ՄԱՏԵՆԱԳՈՏՈՒԹԻՒՆ

ՇԻՒՎԱՆԶԱԴԷ. Արսէն Դիմաքսեան, վէպ (1893թ. «Մուրճ», №№ 1—6 և առանձին գրքով):

I

—Ես հիւանդ եմ, բժշկեցէ՛ք ինձ...
Դիմաքսեան

Վաղուց է մենք մեր ենք գալիս յարմար առիթի չօշափելու այն խնդիրը, թէ ինչ է առհասարակ գեղարուեստական գրուածքի «գաղափար», «նպատակ» ասած բանը՝ ինչ նշանակութիւն ունին այդ բառերը, երբ գործ ենք ածում մի որ և է վէպի, պրամայի կամ ոտանաւորի վերաբերմամբ: Եւ մենք ուրախ ենք, որ այդ առիթը տալիս է մեզ «Արսէն Դիմաքսեանի» պէս մի բարդ ստեղծագործ:

Այս խնդիրը գեղարուեստական գրականութեան հիմնական խնդիրներից մէկն է: Եւ դրա լուծումից կախուած է գրականութեան այս կամ այն ուղղութիւնը: Նայելով թէ ով ինչպէս է հասկանում այդ խնդիրը, մէկը՝ ասելով թէ գրուածքի մէջ կայ «իդէա», «գաղափար», կամենում է մանաւանդ անել այդ գրուածքի առաւելութեան վրայ, միւսը՝ ընդհակառակը՝ նկատում է այդ բանի մէջ միայն գեղարուեստականութեան պակասութիւն: Եւ այն տեղ

տաք վիճաբանութիւնները, որ յաճախ տեղի են ունենում այդ առիթով, մեծ մասամբ թիւրիմացութեան հետևանք են, որովհետև վիճողներն ամեն րոպէ չփոթում են «իդէա» և «տենդենցիա» բառերի նշանակութիւնը։

Օրինակ՝ Գամառ-Ֆաթիպայի «Վարդան Մամիկոնեանի մահը» պոէման ունի «իդէա» թէ «տենդենցիա»։ Կան մարդիկ, որոնք «գեղարուեստական իդէա» են անուանում այն դլխաւոր միտքը, որի հաստատելու համար հեղինակը դուրս է բերում այս կամ այն անձնաւորութիւնները, տեսարանները, դէպքերը. դրանից պարզ երևում է թէ այս ինչ մտածողութիւնը, զգացմունքն է կամենում գրողն արծարծել ընթերցողի մէջ։ Այդտեղ պատկերները հնարուած են միտքը տպացուցանելու համար և մտքի փաստաբանութեան մի միջոց են միայն, այդտեղ գեղարուեստը իր քարոզելու ձգտումով մոտենում է հրապարակախօսութեանը։ «Իդէան» այդպէս հասկացողները անկասկած «Վարդան Մամիկոնեանի մահը» պոէմայի մէջ կըգտնեն «իդէա», սակայն մենք այդ օրինակ սահմանուած «գաղափարը» անուանում ենք «տենդենցիա» և միևնոյն ժամանակ համարում ենք նրան գեղարուեստական բարձր հիւսուածքի համար միանգամայն վնասակար։ Տենդենցիան վնասում է գեղարուեստին, որովհետև՝ արգելելով կեանքի անկողմնապահ, անաչառ ուսումնասիրութեանը և նրա ճիշտ վերարտադրմանը, տալիս է պատկերներին, նկարագրութեանը, գեղարուեստի այդ դլխաւոր մասին երկրորդական տեղ, ծառայական դեր մտքի վերաբերմամբ. տենդենցիան նսեմացնում է գեղարուեստի ոյժը, որովհետև հեղինակը՝ առաջարկելով ընթերցողին պատրաստի միտք, պարզ ցոյց տալով իր մտադրութիւնը, բռնանում է ընթերցողի վրայ, չէ թողնում նրան ազատ, անկախ կերպով, սեփական ոյժերով եզրափակութիւններ անել հեղինակի տւած պատկերներից—փաստերից։ Տենդենցիան իր ջեկավարելու ցանկութեամբ մինչև անգամ վերաւորական է ընթերցողի համար։ Ոչ, գեղարուեստը քարոզ չէ—նա կեանքի անդրադարձութիւն է։

Կեանքի մէջ մեր աչքին ոչ մի երևոյթ չէ ներկայանում առանձնացած. նրա հետ միաժամանակ տպաւորութիւն են թողնում մեր ուղեղի վրայ հազար ու մէկ ուրիշ երևոյթներ, և տպաւորութիւնների այդ խառնուրդը ներսի աշխարհում համապատասխանում է երևոյթների խառնուրդին դրսի աշխարհում։ Բայց մարդկային ոգին չէ կարող ապրել հակասութիւններով, նրա մէջ անդիմադրելի ոյժով գործում է տպաւորութիւնները ի մի վերածելու, ամփոփելու ձգտում, մի ձգտում, որ աւելի մեծ չափով տրւած է գեղարուեստագէտին։ Ինտուիտիվով է թէ բանականութեան միջոցով—նա անընդհատ գննում է իր տպաւորութիւնները, խորասուզւում է իրականութեան իմաստի-ոդու մէջ, կանդ է առնում այդտեղ մի երևոյթի վրայ, որից աւելի մեծ տպաւորութիւն է ստացել,—և ահա սկսւում է ստեղծագործական պրոցեսը։ Երևոյթների խառնուրդից նա ընտրում է միայն այնպիսիները, որոնք կապ ունեն իր ուշքը դրաւած երևոյթի հետ—ազդում են նրա վրայ կամ ուղղւում նրանից, փոխում են նրան կամ փոփոխւում նրանից, նման են նրան կամ բոլորովին հակառակ։ Եւ հէնց որ սկսւում է ոգեկան այդ աշխատութիւնը—մի առանձին դիւրազգացութիւն սկսում է գեղարուեստագէտի զգայարաններում, նա ոգևորւում է։ Կենդանանում է նրա երևակայութեան մէջ ընտրած երևոյթի տպաւորութիւնը, մնացած տպաւորութիւններից արթնանում են միայն նրանք, որոնք աւելի պարզում են, զտում են այն տպաւորութիւնը,— մնացածները մի առժամանակ, մինչև մի ուրիշ բարեպատեհ դէպք, կարծես չքանում են յիշողութիւնից, որի մէջ այժմ կանգնում է իր վեհութեամբ մի ստեղծած, ամփոփ, զգացած, ըմբռնած աշխարհ—և այդ աշխարհը նման է արտաքին աշխարհին, որովհետև նրա բոլոր գործիչները, գործիչների յարաբերութիւնները, ամբողջ շրջանը վերցրած են արտաքին աշխարհից. նրա մէջ չկայ միայն երևոյթների անկապութիւն, նրանց պատահական ղուգադիպութիւն։ Գեղարուեստի ընտրած դլխաւոր կենտրոնական երևոյթի իմաստը այդ ստեղծած աշխարհի մէջ, այդ առանձնացման մէջ, այդ համակարգութեան մէջ դառնում է ինքն ըստ ինքեան պարզ, դիւրըմբռնելի։ Եւ ինչպէս մի բնագէտ մի որևէ երևոյթի օրէնքն իմանալու համար, առանձնացնում է այդ երևոյթը, դննում է նրա փոխոխութիւնը ուրիշ երևոյթների ազդեցութեան տակ և նրա ազդեցութիւնը ուրիշ երևոյթների վրայ, բոլորովին այնպէս և գեղարուեստագէտը վերցնում է առանձնացնում արտաքին աշխարհի բարդութիւնից մի երևոյթ և նրա կից գնում է միայն այն երևոյթները, որոնք այլ կերպ անհրաժեշտ են անում նրա իմաստը։ Բնագէտը գտնում է օրէնքը, գեղարուեստագէտը—իմաստը։ Եւ երբոր յատուկ միջոցով, պատկերացնելու հրապուրիչ եղանակով գեղարուեստագէտը միայն ու միմիայն չարադասում է ընթերցողի ուշքն մի պատկեր միտի եռանից, այնպէս, որ ընթերցողի ուղիղ զարգացած միտքն և չ'այլանդակած զգացմունքը, իր սեփական աշխատութեամբ, հասկանում է գեղարուեստական ստեղծածքի մէջ դուրս բերուած իրականութեան միտքը։ Ահա այդ է գեղարուեստական «իդէան», «գաղափարը»։ Դա այն երևոյթի իմաստն է, որ հեղինակն ընտրել է նախ իր ոգևորութեան և ապա իր նկարագրութեան համար իբրև կենդրոն։

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆՑ

(Կըշարունակւի)

ԳԵՂԱՐԻԵՍՏ

ԹԱՏՐՈՆ

«Կամելիաղարդ տիկին»

Հոկտեմբերի 7-ին, հինգշաբթի Արքունական թատրոնում խաղացեց «Կամելիաղարդ Տիկինն» Ալէքս. Դիւմայի դրաման։ Մարգարիտ Գոտիէի դերը կատարում էր տ. Հրաչեան։ Աննման է տաղանդաւոր դերասանուհին այդ դերի մէջ. հասկանալի է թէ ինչու այդ երեկոյ հասարակութիւնն էլ առաջուանից աւելի շատ էր եկել։ Մենք բոլորովին չափազանցրած չենք լինի, եթէ ըսենք որ Թիֆլիսն երբեք այդպիսի Գոտիէ չէ տեսել. նոյն իսկ սրանից 11 տարի առաջ, 1882 թ. տիկինը չէր խաղում այսպիսի գիտակցութեամբ և գեղարես-

տականութեամբ։ Առաջին ճշմարիտ, ամենածայրայեղ զոհաբերութեանց ընդունակ սիրոյ ամենանուրբ արտայայտութիւնները տիկինն ուսումնասիրել է և մենք դժւարութեամբ կարող ենք ասել թէ որ տեսարանում նա աւելի լաւ էր—այնչափ գեղեցիկ էր ամեն տեղ։ Այդ Մարգարիտը իր ընկերների շրջանում, սիրոյ առաջին զարկի ժամանակ, կամ այնուհետև, երբ ամբողջովին անձնատուր է լինում իր յափշտակութեանը, կամ երբ խօսում է սիրածի հօր հետ, կամ երբ ճանապարհ է ձգում իր պաշտածին... որ մէկ տեղն ասենք—ամեն տեղ, ամեն տեսարանում տիկինը հրաշալի էր, իսկ վերջին գործողութեան մէջ, մահւան տեսարանում—նա գերազանցեց ինքն իրան։ Քանի-քանի անգամ նկատեցինք արտասուքները հանդիսականների աչքերում։ Ոգևորութիւնն ընդհանուր էր, ծափահարութիւններն անվերջ, յափշտակութիւնն լիակատար. երբ վարագոյրն իջնում էր, մի րոպէ մեռելային լռութիւն էր տիրում հիացմունքից և ապա դահլիճը սկսում էր դղրդդալ... Եւ ո՞վ չի զարմանալ թէ ինչպէս, տաղանդի ինչ ոյժ պիտի ունենայ, որ տասը տարի քեմ դուրս չըգալով, յանկարծ հանդէս տայ աւելի շնորհքով, աւելի մշակուած։ Կարծես այդ ժամանակամիջոցում երկնային հուրը ն անվերջ հաւաքւում էր դերասանուհու կրծքում, որպէս զի յանկարծ ժայթքէր և այն էլ ահռելի հրդեհով...

Աւսոս որ այդ երեկոյի տպաւորութիւնը խանգարում էր պ. Պիննէմէճեան—Արման Դիւվալը։ Ո՜րչափ սառն էր նա և ո՜րչափ նկատելի էր այդ սառնութիւնը, երբ կնդքին խաղում էր մի հրաբուղխ... Զևերի մէջ նկատւում էր մի սովորութիւն—թաշկինակը կամ տրորել ձեռքում, կամ դնել անդադար ֆրակի գրպանը և նորից հանել, անցիացնել սիրային տեսարանները ձեռքը պահելով ֆրակի եռևի գրպանում...

Մնացած դերակատարներից աչքի էր ընկնում տ. Ալման Պրիւդանսի դերում։ Պ. Պետրոսեանը Դիւվալ—հօր դերը լաւ կատարեց։

Տիկին Հրաչեային հանդիսականներից մատուցւեց գեղեցիկ մի փունջ։ Հետևեալ հինգշաբթի, հոկտեմբերի 14-ին խումբը խաղալու է մասնակցութեամբ տ. Հրաչեայի «Զոքանչ» դրաման։

—

Թիֆլիսի թատրոնական մասնաժողովը շտապով պատրաստում է նոր պիէսներ։ Արդէն թոյլ են տրւած «Արտուտիկ», «Մեդէա», ներկայացած են գրաքննական ատեանին «Սիրուց խելագար», «Բէաթրիչէ». «Բարեկամ Ֆրից» Էրկման-Շատրիանի, «Հայրենիք» Զուդերմանի և այլն։ Պատրաստւում են—«Սափո» Դրիլլպարցերի, Իբսենի «Ինգէր» և «Գեղնոց դրամաները, Բերնսօնի «Նորապսակներ», Իբսենի «Հասարակութեան սիւներ», Հալևիի «Ֆրու-Ֆրու» կոմեդիաները, փոխադրւում են «Հալածւածը», «Գանձապահ»։ Ինքնուրոյններից այս ամսին կըխաղացւի պ. Սունդուկեանցի հեղինակութիւնը՝ «Ամուսիններ»։ Այդ պիէսը հիմնովին փոփոխած է և նորերս լոյս կըտեսնի տպագրութեամբ։ Այնուհետև կըներկայացւի «Ո՞վ է մեղաւոր» հանգուցեալ Գրիգոր Երիցփոխեանի, «Այ քեզ օլինի» հեղինակի կոմեդիա-դրաման 3 գործողութիւնով։ Ինչպէս լսում ենք, այդ պիէսի նիւթը վերցրած է ներկայ ինտելիգենտ սերնդի ընտանեկան կեանքից, շօշափում է վերին աստիճանի հետաքրքրական խնդիրներ և գրւած է տաղանդով։ «Ով է մեղաւոր» պիէսը դեռ չէ խաղացւել մեր բեմի վրայ. նա գըրւած է 8 տարի սրանից հեղինակի մահից մի ամիս առաջ։ Գրիգոր Երիցփոխեանը բառարան կազմող Երիցփոխեանի որդին էր։

—

Պօլսեցի դերասան պ. Ալիքսանեան մօտ օրերս հասաւ Թիֆլիս։ Պ. Ալիքսանեանի անունը վաղուց հասել է մեզ և ցանկալի կըլինէր, որ հայ թատրոնական կօմիտեատը հրաւիրէր գոնէ մի քանի ներկայացումների համար այդ չնորհալի դերասանին։

—

Թիֆլիսում սկսւեցան օպերային ներկայացումները։ Բացի օբիորդ Պապայեանից, որ փայլում է իր մտածւած խաղով, մաքուր, մետաղահնչիւն ձայնով և նուրբ ու գեղարւեստական երգասացութեամբ, մնացած արտիստները միայն ծիծաղ են յորուցանում իրանց միմոսային ծամածռութեամբ բեմի վրայ և ձայնի խռպոտութեամբ կամ նրա բացարձակ բացակայութեամբ։ Գեղարւեստական ճաշակ ունեցողը միայն զզւանք կարող է ստանալ Թիֆլիսի օպերային ներկայացումներից։

—

Էջմիածնից մեզ հաղորդում են, որ ս. Օծման օրերին սիրողները ներկայացրին այնտեղ «Ռանդած Օջախ» կոմեդիան և «200,000» վոդեվիլը։ Խումբը շատ թոյլ էր կազմակերպւած, ներկայացումը վատ անցաւ, մինչև անգամ ձանձրալի էր։ Միակ զւարճութիւնն անտրակտներն էին, որոնք տեւում էին աւելի երկար, քան թէ արարւածները և որոնց միջոցին նւագում էր ջութակահար խումբը։ Ներկայացումը յօգուտ ծխական դպրոցի էր. վաճառւեցին նաև մինչև 25 ռուբլու ձեռագործներ։ Մեր մէջ վատ սո-

վորութիւն է դարձել թատրոնը ծառայեցնել դպրոցին, առանց աշխատելու թատրոնին ինքնուրոյն կեանք տալու։ Նախ որ ամօթ է, որ Վաղարշապատի պէս գիւղաքաղաքը, որ ունի 700 տուն բնակիչ, չըկարողանայ պահել իր դպրոցն առանց պատահական եկամուտների. և ապա՝ այդպիսի տեղերում վաղուց է, որ մշտական բեմ և լաւ դերասանական պարագաները պիտի ձեռք բերւած լինէին, նոյն իսկ խումբը քիչ թէ շատ փորձւած պիտի լինէր։ Իսկ այժմ բեմի վրայ, լաթի կտորներ են կախւած, խաղացողներն անծանօթ են բեմական ամենատարրական կանոններին, կանգնած են բեմի վրայ անշարժ, աչքերն յառած յուշարարի տնակին։ Պատահում է յաճախ, երկու տիկին բեմի վրայ կռւելուց յետոյ իրար եւևից միևնոյն դռնակով և միևնոյն սենեակն են դուրս գնում։ Ոչ մի յարմարութիւն ժողովրդի վերայ «ելիւզիա» գործելու։

—

Հոկտեմբերի 7-ին Փարիզում վախճանւեց կաթւածից աշխարհահռչակ կոմպոզիտոր Գունօն՝ «Ֆաուստի», «Ռոմէօ և Ջուլիետտա» օպերաների, հռչակաւոր »Quand tu chantes» սերենադի և այլ բազմաթիւ երաժշտական ստեղծագործութիւնների հեղինակը։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» խմբագիր հաստատւած է պ. Աղէքսանդր Քալանթար։ Պարոնը աւարտել է Մոսկւայի անտառային-դիւղատնտեսական ճեմարանը և վաղուց յայտնի է հայոց գրականութեան մէջ իր գրականական և գիտնական-ժողովրդական աշխատութիւններով, իսկ գիտութեան մէջ իր ուսւերէն հետազօտութիւններով։

—

Խմբագրութիւնս ստացաւ Եւպատորիայից պ. Զորաբ Ստեփանեանից երեք ռուբլի յօգուտ ուսուցչական-խնայողական արկղի յանուն Հայրիկի։

Այդ փողը նոյն նպատակով ստացւելիք ուրիշ փողերի հետ կուղարկենք էջմիածին՝ Նորին Վեհափառութեան։

—

Մոսկւայի եղբ. ժամհարեան բանկիրները ուղարկել են Վեհափառի կարգադրութեան 18,000 ռուբլի։ Նորնախիջևանցիք հաւաքել են իրանց մէջ 3,000 ռուբլի և նոյնպէս ուղարկել Վեհ. Հայրիկին։ Պ. Ն. Տէր-Ղևոնդեանը իր «Մայրենի լեզուից» 1,000 օրինակ Հայրիկի անունով նւիրել է մեր ուսումնարանների աղքատ աշակերտներին։ Մոսկւայում ապրող նորնախիջևանցիք նոյնպէս հաւաքում են իրանց մէջ փող Հայրիկին ուղարկելու։ Լսում ենք, որ այս նպատակով մի քանի տեղերում ստորագրութիւններ են բացւում, մանաւանդ ուսուցիչների մէջ, որոնք մտադիր են խնդրելու, որ հիմնւի ուսուցչական փոխատու-խնայողական արկղ Հայրիկի հովանաւորութեան ներքոյ։

—

Մեզ հաղորդում են իբրև լուր, որ բագւաբնակ մի յայտնի հարուստ վաճառական իր վրայ է առել էջմիածնի վեհարանի չինութիւնը և բացի դրանից՝ մի խոշոր դրամագլուխ է նւիրում յօգուտ մայր-թանգարանի։ Այդ լուրի ճշտութիւնը դեռ ևս կասկածելի է։

—

Լուր էր տարածւած, որ Վեհափառ Հայրիկը անմիջապէս Օծումից յետոյ կատարելու է եպիսկոպոսների ձեռնադրութիւն։ Հաստատ յայտնի է արդէն, որ այդ լուրը ճիշտ չէ։

—

Մեսրովբ արեղայ Տէր-Մովսիսեանին և Արշ. Տէր-Միքելեանին յանձնւած է կարգի բերել էջմիածնի մատենադարանի ձեռագիրները։

—

Մեզ հաղորդում են էջմիածնից, որ Նորին Վեհափառութիւնն ի մօտոյ քննել է Ներսիսեան դպրոցի նոր հոգաբարձուների ընտրողական թղթերը և յոյս կայ, որ այս օրերը այդ հարցը կըվճռւի վերջնականապէս։

—

Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը իր վերջին նիստում վճռել է չըներկայացնել այլ ևս պ. Կոստանեանցին հաստատութիւն իբրև տեսուչ Ներս. դպրոցի։

—

Հաստատ աղբիւրից լսում ենք, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը կազմակերպել է մի յանձնաժողով քննելու պ. Կոստանեանցի անկանոն գործերը...

—

Վեհափառի գիտութեամբ Երևանի փոխանորդ Կիւրեղ ծ. վարդապետ Սրապեանը արձակել է պաշտօնից Մեսրոպ քահանայ Մելեանին և նրա տեղը նշանակել է Մ. ք. Գեօզեանցին։

—

Տէրութեան կարդադրութեամբ Երևանից էջմիածին տանող խճուղու չինութիւնը կըվերջանայ 1894 թւի դեկտեմբերի սկզբին։

—

Զորեքշաբթի, հոկտեմբերի 6-ին Պետերբուրգի համալսարանի պրիւատ-դոցենտ Նիկ. Մառը ուղևորւեցաւ Պետերբուրգ։ Երիտասարդ պարոնի պեղումները Անիի մէջ, Հաղբատի և Սանահնի չրջակայքում մեծ աջողութեամբ են անցել։ Պարոնը իր պեղումների արդիւնքը—27 փութ բրածոյ արդէն ուղարկել է Պետերբուրգի հնաբանական կոմիսիային։

—

Քաղաքային վարկի ընկերութեան վարչութեան անդամների ընտրութիւնը տեղի է ունենալու հոկտ. 24-ին. նոյն ժողովում հարց պիտի բարձրացնի անդամների ռոճիկները պակասեցնելու մասին։

—

«Զօրջաձէի և ընկ.» յայտնի դիմեդործական ֆիրմայի փայերի ահագին մասն անցել է Միքայէլ Շահմուրադեանի ձեռքը։ Զօրջաձէի, որ հիմա հոգեկան հիւանդութեամբ տկար է, 14 փայը 14,000 ռուբլու արժողութեամբ՝ միայն 752 ռուբլիով է գնել պ. Շահմուրադեանցը հոկտ. 4-ին նշանակւած աճուրդում։

—

Վրաց «Իւերիա» լրագրին հաղորդում են, որ Ախալցխայի մօտերքում, չորս վերստ հեռաւորութեան վրայ, պետական կալւածներում գտնել է քարածուխի հանք։ Պարոն Բեթանովը գնել է այդ քարածուխը, որը լաւ յատկութիւններ ունի. պարո-

նը խնդիր է ներկայացրել Թիֆլիսի նահանգական արքունի կալւածքների վարչութեանը, որ իրան տան քարածուխի հանքը չահագործելու համար։

—

Այս օրերս Ղզլար են հասել տ. Զաբէլը, պ. պ. Ստեփանեանը և Աբրահամեանը, որոնք մտադիր են այնտեղ մի քանի ներկայացում տալ։

—

Հոկտեմբերի 6-ին Պարիզում մեռաւ իր պարտութեամբ յայտնի մարեչալ Մակ-Մահօնը։ Մահից յետոյ նա թողել է իր յիշատակարանը և բազմաթիւ կարևոր թղթեր, որոնք վերաբերում են վերջին ֆրանկ-պրուսական պատերազմին։

—

Լոյս տեսաւ «Մուրճի» № 9, հետևեալ բովանդակութեամբ. Ադայեանց Ղազարոս.—Իմ կեանքի գլխաւոր դէպքերը։ Թումանեանց Յովհաննէս.—Պօէտին (բանաստեղծութիւն)։ Սեն-կևիչ Հենրիկ.—Առանց Դաւանանքի։ Թումանեանց Յովհաննէս.—Այվազովսկու պատկերի առաջ (բան.)։ Ղարաջևան Գէորգ.—Քաղաքակրթ. զարգացմ. ընթացքը։ Խալաթեան Սամուէլ.—Բոյսերի բեղմնաւորութիւնը։ Արղութեան Սոֆիա.—Ընտանիքը և դպրոցը։ Աթանասեանց Ա.—Գիւղատնտեսութեան ուսումը։ Ս. Թ.—«Ախտահանութիւն» Լէօհ։ Նաւասարդեանց Մկրտիչ.—«Էլգուջա»։ Լուսինի.—Օձման հանդէսից։ Մարկոսեանց Ի.—Կաթողիկոսը և հայ-բողոքականները։ Մուրադեանց Յ.—Սև ծովի ափերից III։ Ս. Թ.—Ռուսատանից։ Ֆ.—Արտասահմանեան Քրոնիկ։ Շ.—Ռուս-Ֆրանսիական բարեկամութիւնը։ Խմբ.—Զանազան լուրեր։ Յայտարարութիւններ։

—

Լոյս տեսաւ «Աղբիւրի» № 9, հետևեալ բովանդակութեամբ. Վեհափառ Կաթողիկոսի Ս. Օծումը։ Սիգինի այծիկը (ֆրանսերէնից),—***։ Համասփիւռ (հեքիաթ).—Գ. ք. Մատինեանց։ Կլէֆտի ընծաները (Գրիբոյեդովից).—Յ. Կոստանեանց։ Պանդուխտ-նուագածու.—Փոխ. Զ. Բալուչեան։ Գիտական Զրոյցներ. Կենդանիների աշխարհում, VI.—Վ. Լունկևիչ և Տ. Յ.։ Այլ և այլք. Ֆրիդրիխ III կայսրի կենսագրութիւնից։ Ս. Մաւրիկիանոսի կղզու կրիաները։ Ինչպէս են բարևում զանազան ազգերը։ Աղուէսի և արծուի ընկերութիւնը։ Զուարճալիք. Հանելուկներ, առաջարկութիւններ։ «Աղբիւրի» նախընթաց 5—6, 7—8 համարների բացատրութիւնը։

—

ՎՐԻՊԱԿ. „Տարազի“ № 37 „Սուրհանդակի“ մէջ՝ „Դիլիջան. Աբմենակ Սիմէոնեանց“, պէտք է լինի Աբրահամ Սիմէոնեանց։

„Տարազի“ № 38 „Էվոլիւցիա և բարոյականութիւն“ յոդ. 587 երես 2-րդ սենեակի 17-րդ (ներքևից) տողում „վիացնիչ“ բառի փոխարէն պէտք է լինի մեռցնիչ։

Ժամանակ. Խմբ. Վ. ՍՈՒԼԹԱՆՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հոկտեմբերի 31-ին գիւղատնտեսական-պատմական թանգարանի դահլիճում բացւելու է

ԳԵՂԱՐԻԵՍՏԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ

Ընդունւում են բացառապէս ինքնուրոյն երկեր նկարչութեան և անդրիագործութեան ամեն տեսակից, նոյնպէս և ճարտարապետական նախագծեր, ջրաներկեր, փորագրութիւններ, պատկերներ, փայտի վրայ այրւածքների նմուշներ, ֆարֆորի վրայ զարդարական նկարչութիւն։ Գեղարւեստագէտները և սիրողները հրաւիրւում են դիմել թանգարանը հոկտեմբերի 20-ից մինչև 25-ը, երեկոյեան 3—5 ժամին։ 2—1

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ

Կամենում է դասեր տալ միջնակարգ դպրոցի ԲՈԼՈՐ առարկաներից, ստանալով բնակարան և ճաշ, կամ միայն ճաշ։ Կարող է հասակաւորների հետ պարապել ընդհանուր գիտութիւններից և գերմաներէնից։

Հասցէն թողնել «Տարազի» խմբագրատանը։

«Աղբիւր-Տարազի» գրասենեակում
Վաճառւում է
ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ
ՄԿՐՏԻՉ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՀԱՅՐԻԿԻ ՄԵԾԱԴԻՐ ՊԱՏԿԵՐԸ

Ամենավերջին լուսանկարից հանած։ Ցինկոգրաֆիական կլիշէից պատրաստւած է Վիեննայի Անգերերի նշանաւոր գործարանում։

ՊԱՏԿԵՐԻ ԳԻՆՆ Է. Բրիստոլի կէս ստւարաթղթի վրայ 1 ռուբլի, մէջակ թղթի վրայ՝ 50 կոպ. և հասարակ թղթի վրայ՝ 30 կոպ.։ Դիմաորով առնողներին զեղչ։ Յանապարհածախքը գրասենեակի վրայ։

ՎԱՐԴԱՆ ԼԻՍԻՑԵԱՆԻ
«ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԳԻՐՔԵՐ»
ԿԱՆԻՍՑԻ ՎՐԱՅՈՎ ԿԱՐԵԼՈՒ
ԳԻՆՆ Է 20 կոպէկ,
Դիմել Թիֆլիս. Вартану Лисицянъ.
5—1

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են *attestat*-ներ։

Ասնդելի առարկայք սորա են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն։

Ուսումը սկսելու է սեպտեմբերի 15-ից, ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Աղէքսանդր Փրիդօնօվի տանը, № 9 Սերդիէվսկայա և Նագորնայա փողոցների անկիւնում։ Պրագիրը և կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԵՍ եղբ. Փովիանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Манузльянцу. 12—10

Ազգիս վերահաս Հայրապետից բարեհաճ թոյլտուութիւն ստացած գոլով՝ եկեղեցական-ծխական երկու սեռի նոր դպրոցներ բաց անելու ներկայ 1893/94 ուսումնական տարեշրջանում՝ այսու խնդրում եմ թեմիս վիճակների բարեկրօն գործակալ հարց՝ մինչև ամսոյս 20-ն ուղարկել ինձ ի Տփխիս իրանց վիճակներում հիմնելի դպրոցների հոգաբարձուների ընտրողական թերթերը, որոնց մէջ պէտք է նշանակուած լինեն տեղական քահանաների, եկեղեցւոյ երեցփոխանի անուններն ու ազգանուններն, ևս և հասարակութեանց կողմից ընտրուած անձի և նրա անձնափոխանորդի անունները։ Ընդ սմին յայտնում եմ, որ նորոգ հիմնելի դպրոցների (մեծ մասամբ գիւղերում) համար՝ հարկաւոր են 36 ուսուցիչներ և ուսուցչուհիներ։ Յանկացողները պէտք է դիմեն ինձ, բանաւոր կամ գրաւոր կերպով, ի Տփխիս, առաջնորդարանում մինչև ամսոյս վերջը։

Թեմական տեսուչ եղիշէ քահ. Գեղամեանց

Լոյս տեսաւ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

ԳՐԵՑ

Պարսկաստանի և Հնդկաստանի թեմի պատգամաւոր

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Գինն է 20 կոպ.

Վաճառւում է Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներում։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ

ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ

ՎԷՊ Ը

Վաճառւում է հեղինակի մօտ. Тифлисъ, Ширванзадэ. Грибоѣдовская, д. № 7.

Գինն է ճանապարհածախսով 1 ռ. 50 կոպ.։ Գրավաճառներին զիջումով։

10—7

Ա Զ Դ

Բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանցի կտակին տրամադրութեան համաձայն՝ Սահակ-Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութիւնն տեղի պիտի ունենայ յառաջիկայ տարի յունուր ամսի սրբոյ Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ։

Հետևապէս՝ այն ամեն հեղինակք ու բանասէրք որ ազգային դպրութեան և պատմութեան վերաբերեալ ի և է երկասիրութեամբ կրփափաքին մասնակցել այս մրցանակաբաշխութեան, կհրաւիրուին մինչև յառաջիկայ տարւոյ յունուարի սկիզբն ուղարկել առ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն, ի Կ. Պոլիս իրանց աշխատասիրութիւնները։

Տպագրեալ երկասիրութիւնք երեք օրինակ պէտք է յուղարկուին. իսկ ձեռագիրք մի օրինակ՝ որք ետ չեն տրուիր։ 5—4

ՎԱՃԱՌԻՒՄ ԵՆ ԻՄ ՀԵՏԵՒԵԱԼ

ՄԵԾԱԴԻՐ ՆԿԱՐՆԵՐԸ

1 Ներսէս պատրիարք . . . . . — 25

2 Պետրոս Ադամեան . . . . . — 50

Յանկացողները ճանապարհածախս չեն վճարում.

Դիմել՝ Тифлисъ, С. Согомоняцъ. Въ редакц. „Агбюръ-Таразъ“

Դումարով գնողներին զիջումն կը լինի։

Թիֆլիսի ԱՅԳԵՀՈՐԾԱԿԱՆ ուսումնարանի Մանկավարժական խորհուրդը յայտարարում է, որ ընդունելութեան համար քննութիւնները նշանակւած են ուսումնարանում սոյն Հոկտեմբերի 29-ին: 3—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԲԱՓՓԻ
„ԱՐԾԻՒ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ“
(ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ)
(Նորին Վեհափառութեան պատկերով)
Գինն է 70 կոպ.
Օտարազգացիք փողի փոխարէն կարող են մարկա ուղարկել:
Դիմել՝ Тифлисъ
Анна Раффи.

Вера, Вторая Кирпичная улица, д. Алтеровича № 3.

Այս հասցէով տանը երեք ամսւայ ընթացքում սովրեցնում են շրջագգեստի (դերլեյի) ձեւագիտութիւնը. կարել իմացողներին 10 ռուբլիով, իսկ կարել չիմացողներին 15 ռուբլիով:

Բայց տղի շորի ձեւագիտութիւնը սովրել ցանկացողները պիտի վճարեն նաև 5 ռուբլի: 5—4

Պատկերազարդ

ԱՂԲԻՒՐԸ եւ ՏԱՐԱԶԸ

հրատարակւում են

մշտական աշխատակցութեամբ պ. պ. Գաբրիէլ Միրզոեանցի եւ Ստեփան Լիսիցեանցի, նոյն ծրագրով եւ դիրքով.

Նոյս տեսաւ «Աղբիւր»-«Տարազի» երկրորդ նւէրը՝ Վեհափառ Հայրիկի (կաթողիկոս ժամանակւայ) մեծադիր պատկերը: Մեր բաժանորդների համար պատրաստւած է Վիեննայում, շքեղ թղթի վրայ տպած: Թիֆլիսի բաժանորդները ստանում են խմբագրութեանս դրասենեակից:

Հասցէն փոխելու համար վճարւում է 35 կոպ. մարկա:

Հասցէն. Тифлисъ, Редакція иллюстр. журн. Агбюръ *կամ* Таразъ, *իսկ արտասահմանից՝* Tiflis-Caucas Rédaction des jour. illustrés Agbur— Taraz.

Дозв ценз. 9 октября 1893 г. Тифлисъ. Հրատ. Տ. Նազարեան. Тип. Груз Изд. Т—ва.